

ՀԱՅԿ. ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐՇՈՒՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱԾՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Posted on August 24, 2020 by Keghart



Category: [Opinions](#)



ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվերով փորձագետների երկու խմբեր հեղինակել են հայոց լեզվի, հայ գրականության ու հայոց պատմության կրթական նոր չափորոշիչներ: Վերջիններս մեծ վրդովմունք և զայրույթ են առաջացրել ՀՀ-ում և սփյուռքում:

Հայկական Ժողովրդային Ծարժումի Հայաստանի ներկայացուցչության անդամները վերջին շաբաթ ներին մոտիկից հետևեցին այս հարցի շուրջ ամենատարբեր ելույթներին, դիտեցին տեսանյութեր, ծանոթացան թեր ու դեմ կարծիքների մեծ մասին:

Այս բոլորի հիման վրա, Հայկական Ժողովրդային Ծարժումի Հայաստանի ներկայացուցչությունը հայտարարում է.

1. Առաջարկվող կրթական չափորոշիչները **անընդունելի** են, քանի որ չեն նպաստակադրում ՀՀ-ում հայ երեխայի ազգային դաստիարակությունը, հայրենատեր նոր սերնդի կազմավորումը:
2. Փորձագիտական խմբերի անդամները վստահություն չեն ներշնչում:

Առաջարկում ենք.

1. Կազմավորել փորձագիտական նոր խմբեր, որոնք կրթական չափորոշիչներ ու ծրագրեր մշակելիս կառաջնորդվեն հայության ազգային դպրության ավանդույթներով՝ դրանք պատվաստելով տարբեր երկրների հանրակրթական չափորոշիչների ու մեթոդների դրական և հայկական ազգային կրթությանը հարիւր տարրերով:
2. Փորձագիտական խմբերում ընդգրկել հայագիտական առարկաների սփյուռքահայ ճանաչված մանկավարժների՝ թեկուզ խորհրդատուի կարգավիճակով:

Հայկական Ժողովրդային Ծարժում – Հայաստան
Երևան, 17 օգոստոսի 2020թ.

There are no comments yet.